




Գ. ՅԵՐ-ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄԸ



էմիածին...

Որքա՛ն հարազատ, սուրբ ու նվիրական է այս անունը ամեն մի հայի համար՝ աշխարհի ո՛ր ծայրումն էլ որ նա գտնվելիս լինի:

Էմիածին...

Ինչպիսի՜ ակնածանքով է արտասանում այս անունը ամեն մի հայ, և ինչպիսի՜ բուռն սիրով է փափագում ամեն ոք գեթ մի անգամ այն տեսնելու, դիտելու Մայր Տաճարը, որը մեր ժողովրդի հավատո հանգանակն է եղել, նրա Սրբություն Սրբոցը:

Էմիածինը չի եղել սոսկ սրբավայր կամ ուխտատեղի, այն չի եղել միայն որպես պատմական հուշարձան կամ հայրապետական աթոռանիստ: Այն եղել է մեր ժողովրդի ազգային գոյության խորհրդանշանը, նրա հոգեկան կարողությունների և հոգու ամրոցը, մեր ժողովրդի բազմադարյան կուլտուրայի օջախներից ամենամեծը և, եթե կուզեք, հայի ֆիզիկական գոյության ապավենը:

Եվ պատահական չէ, որ մեր ժողովրդի բազմադարյան արյունոտ պատմության ողջ ընթացքում, ամեն անգամ երբ օտարերկրյա զավթիչների հորդանքը խուժելով մեր երկիրը, հրի ու ճարակի են ենթարկել մեր շեն քաղաքներն ու գյուղերը, մահվան համատարած սարսափի ու ամայության մեջ կրկին ու կրկին հնչել են Մայր Տաճարի զանգերը, հնչել

ոչ որպես բոթաբեր ազդանշաններ, այլ որպես ահեղ ահազանգ, որը վերստին կյանքի է կոչել բնավեր, մահվան ճանկերից մազապուրծ եղած ժողովրդին, հույս ներշնչել նրան, գոտեպնդել, կոչել դեպի ստեղծագործ աշխատանքը:

Այդպիսի՜ն է եղել Էմիածինը, Հայոց Եկեղեցու Մայր Տաճարը:

Բազմել է այն, հայոց Ս. Էմիածինը, Արարատյան դաշտի կենտրոնում, հինավուրց Մասիսների ղեմ-դիմաց, նրանց ստվերի ներքո: Բազմել է խորախորհուրդ, հաստատուն, ժամանակներից հոգմահար ու գունաթափ, որպես լուռ վկա անցած դարերի, որպես հոյակերտ մի կոթող հայոց հին ճարտարապետության: Եվ թվում է միշտ այդպես կանգուն կմնա, քանի այս պատմական դաշտավայրում կապրի հայը, քանի կհնչի նրա երգը, քանի կանգուն կլինի նրա կուլտուրան:

Որքան էլ կերպարանափոխվի այդ դաշտավայրը, շենանա ու փթթի այն, սակայն չի կարելի պատկերացնել Արարատյան դաշտը առանց Էմիածնի, ինչպես չի կարելի պատկերացնել առանց Արագածի, առանց Արաքսի, առանց ալեհեր գույգ Մասիսների:


Ավելի քան 16 դարի պատմություն ունի Ս. Էմիածնի Մայր Տաճարը: Այն կառուցվել է հայոց Տրդատ Մեծ թագավորի և Ս. Գրիգոր

Հուսավորելի կողմից շորորոդ դարի սկզբներին և հանդիսանում է քրիստոնեության դարաշրջանի հնագույն հուշարձաններից մեկը աշխարհում, եթե ոչ ամենահինը:

Շատ դարեր են անցել Ս. Էջմիածնի Մայր Տաճարի գլխով, ժամանակները հողմահարել են այդ հինավուրց կերտվածքը, մասամբ և իրենց քայքայիչ կնիքը դրել նրա ճակատին. այն վերակառուցվել է մի շարք անգամներ, բայց, հիմնականում, մնացել է իր նախկին վիճակում, դիմացել է դարերի անողոք փորձությունը ու կանգուն է մինչև այսօր:

Թյուն ունի. Այդ հարցով, դեռ անցյալ դարի վերջերին, մտահոգված է եղել հայոց Մակար կաթողիկոսը, իսկ նրանից հետո, առավելապես ժողովրդական մեծ հայրապետ Խրիմյան Հայրիկը: Սակայն նրանց բոլոր ջանքերը իրագործելու իրենց բաղձանքը, անցել են ապարդյուն և ժամանակների ու պայմանների թելադրանքով Տաճարի վերաշինության հարցը մնացել է անլուծելի:


Իր կարճատև, սակայն եկեղեցաշինարարական ու հայրենասիրական բեղուն գործունեության ընթացքում Ամենայն Հայոց Հայ-



Հարավային արսիդի կամարը
վերանորոգումից առաջ

Ճարտարապետական այդ անգնահատելի հուշարձանը վաղուց ի վեր կարիք ուներ վերակառուցման, որպեսզի դարերի ծանրությունից խախտված մասերը նորոգվեին և Տաճարը իր նախկին հաստահիմն վիճակը պահպաներ: Այդ էին պահանջում Հայոց Առաքելական Եկեղեցու շահերը, հայ ժողովրդի կուլտուրայի պատմության շահերը:

Էջմիածնի Մայր Տաճարի վերանորոգման հարցը երկար տասնամյակների պատմու-



Հարավային արսիդի կամարը
վերանորոգումից հետո


րապետ հանգուցյալ Տ. Տ. Գեորգ Զ. Կաթողիկոսը բացառիկ ուշադրություն էր նվիրում Մայր Տաճարի վերականգնման հարցին: Այդ հարցը Վեհափառի ամենամեծ հոգացողության առարկաներից մեկն էր, որի բարեհաջող լուծման համար նա այնքան շատ ջանք թափեց իր ժամանակին:

Անցել է 10 տարի, սակայն մինչև այսօր չի կարելի դեպի մեծ հայրենասերն ու շինարար եկեղեցականը ունեցած խորին ականածանքով

շկարդալ Վեհափառ Հայրապետի վաղեմի բաղձանքն արտահայտող հետևյալ խոսքերը, որ նա գրել է Իր անդրանիկ կոնդակում, գահակալությունից անմիջապես հետո.

«Սարսուռ եմ զգում հիշելով ծանր պարտականությունները և բազմապիսի հոգսերը, որ Ամենայն Հայոց Հայրապետի ուսերին է բարձած, և խորհում եմ՝ պիտի կարողանամ արդյոք, ծերությունս հասակում, խղճի մտոք կատարել պարտքս. պիտի հաջողվի՞ արդյոք

հարստությունների միակ ժառանգորդը: Նա գիտի գնահատել ու պահպանել անցյալի արժեքները: Սովետական կառավարության մըշտական հոգատարության շնորհիվ, հայրենի երկրում վերակառուցվել են մի շարք պատմական հուշարձաններ: Այս իրողությունը ցայտուն ձևով ապացուցում է հայրենի պետության ուշադրությունը՝ մեր նախնիքներից մեզ ավանդ մնացած հրաշալի կոթողների հանդեպ:



Գմբեթի ձեղունը վերանորոգումից առաջ

Ինձ՝ ներքնապես ու արտաքնապես հիմնովին վերականգնել հայ հնադարյան թանկարժեք կոթողը՝ Ս. Էջմիածնի Մայր Տաճարը:

Այսօր, ի մեծ ուրախություն համայն հայության, կարելի է հայտարարել, որ հանգուցյալ Վեհափառ Հայրապետի իղձը իրագործվում է՝ սկսված և արագ թափով առաջ են տարվում Ս. Էջմիածնի Մայր Տաճարի և նրա հարակից մի շարք շենքերի վերականգնման ու նորոգման աշխատանքները: Այս մեծ գործը, որը հսկայական միջոցներ ու աշխատանք է պահանջում, իր վրա վերցրեց Սովետական բարեխնամ կառավարությունը:

Հայ ժողովուրդը, հանձինս իր հարազատ Սովետական կառավարության, հանդեսանում է իր անցյալի նյութական մշակույթի բոլոր

էջմիածնի պատմական հուշարձանների վերանորոգման ու նորոգման հարցը վերջնականապես քննության առնվեց և լուծում ստացավ դեռևս հանգուցյալ Գեորգ Զ. Կաթողիկոսի կենդանության օրոք:

Մայր Տաճարի, ինչպես նաև նրա հարակից շենքերի վիճակը ու նորոգման աշխատանքների ծավալն ու բնույթը նախապես որոշելու համար ստեղծվեց ականավոր մասնագետներից և հայ ժողովրդի նյութական կուտուրայի պատմությանը քաջ ծանոթ անձնավորություններից բաղկացած մի պատկառելի հանձնաժողով, որի մեջ մտան մեր մեծանուն բանաստեղծ Ավետիք Իսահակյանը, ժողո-

վերդական նկարիչներ Մարտիրոս Սարյանը, Հակոբ Կոջոյանը, Սովետական Միության Կերպարվեստի ակադեմիայի իսկական անդամ Սարգիս Սաֆարյանը, արվեստի վաստակավոր գործիչ, ճարտարապետ Մարկ Գրիգորյանը, ճարտարապետության թեկնածուներ Վ. Հարությունյանը, Ռ. Իսրայելյանը և այլ ճարտարապետներ ու մանրանկարիչներ:


Տեղում կատարված մանրազնին ուսում-

կուտուրայի նկատմամբ ցուցաբերած մեծ հոգատարության մի նոր և վառ արտահայտություն:

Էջմիածնի պատմական հնությունների վերականգնման ու նորոգման գործը դարձել է արդեն ողջ հասարակայնության ամենալուրջ հոգատարության առարկան:

Սվ դա միանգամայն հասկանալի է:

Պատմական մի այնպիսի շնաշխարհիկ հուշարձանի վերականգնումը, որպիսին է




Գմբեթի ձեղունը վերանորոգումից հետո

նասիրությունների ու չափազորումների հիման վրա հանձնաժողովը կազմեց իր եզրակացությունները և ներկայացրեց կառավարական մարմիններին: Կառավարությունը չզլացավ անմիջապես որոշում կայացնելու Էջմիածնի պատմական հուշարձանների վերականգնման ու նորոգման մասին՝ սահմանելով կատարվելիք աշխատանքների մոտավոր ծավալը և նախատեսվող միջոցների գումարը, ինչպես նաև տրամադրելով նորոգման համար անհրաժեշտ ամեն տեսակի շինարարական նյութեր:

Հայ ժողովուրդը Մայր Հայրենիքում և Սփյուռքում անհուն գոհունակությամբ ընդունեց կառավարության այդ որոշումը՝ դիտելով այդ քայլը որպես հայ ժողովրդի դարավոր

Մայր Տաճարը իր հարակից շենքերով, պահանջում է շատ ավելի լուրջ մոտեցում, հարցի բազմակողմանի քննարկում: Ահա թե ինչո՞ւ մեր հասարակայնության տարբեր խավերի ներկայացուցիչները ամենագործոն մասնակցություն ունեցան վերականգնման ու նորոգման աշխատանքներին վերաբերող նախագծերի ու առաջարկների քննարկմանը, մտքորին շատ արժեքավոր շտկումներ նորոգման հարցին վերաբերող նախնական արձանագրություններում և նախագծերում:


Վերջին մեկ տարվա ընթացքում Էջմիածնի վերականգնման ու նորոգման նախագծերը մի քանի անգամ ամենամանրակրկիտ կերպով քննության են առնվել Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին կից ճարտարապետ-



Արևելյան հենարան կամարը



Արևելյան հենարան կամարը



վերանորոգումից առաջ




վերանորոգումից հետո

տական գործերի վարչության ճարտարապետական խորհրդի, ինչպես նաև այդ խորհրդի կողմից կազմված զանազան հանձնաժողովների ընդլայնված նիստերում, որոնց մասնակցել են հմուտ մասնագետներ: Այդ քրննարկումները հնարավորություն տվեցին նորոգման աշխատանքների վերաբերյալ հանգել մի ընդհանուր եզրակացության և ղեկավարվել դրանով:

Այսպես, ուրեմն, որոշեցին այն հիմնական

վական խախուտ է: Տանիքից ծծվող անձրևաջրերը ժամանակի ընթացքում թափանցելով պատերի մեջ, որոշ հատվածներում քայքայել են ինչպես քարերը, այնպես էլ շաղախը: Տաճարի հիմքերը խորը չեն, դրանց խորությունը հավասար է 1-ից մինչև 1,1 մետրի: Բացի այդ, շորս զմբեթակիր մույթերն էլ իրենց որոշ հատվածներում ունեն ճեղքվածքներ: Այդպիսի ճեղքվածք ունի նաև արևմտյան զմբեթակիր կամարը:



Թմբուկի գագաթի հյուսիս-արևելյան մասը վերանորոգումից առաջ

աշխատանքները, որոնք կատարվում են և պետք է կատարվեն էջմիածնի պատմական հուշարձանների վերականգնման ու վերանորոգման ուղղությամբ:

Ամենից առաջ անհրաժեշտ է ապահովել հիմնական հուշարձանի՝ Մայր Տաճարի կալուծությունը, կանխել Տաճարի կալուծությանը սպառնացող վտանգը: Իսկ այդպիսի վտանգ կա և այն էլ շատ լուրջ: Մասնագետներից կազմված մի սովորական հանձնաժողով տեղում մանրամասն ստուգելով Մայր Տաճարի կոնստրուկտիվ վիճակը, հանգեց այն եզրակացության, որ Տաճարի վիճակը բա-

Տաճարի կալուծությանը սպառնացող այս վտանգը կանխելու համար ձեռք են առնված ճարտարագիտական արտակարգ միջոցներ: Նախ՝ պատերի քայքայված և խախուտ քարերը փոխարինվելու են նորերով: Պատերի մեջ եղած ճեղքերը փակվելու են ցեմենտի հատուկ բաղադրության շաղախի ներարկման միջոցով:


Շատ ավելի բարդ է զմբեթակիր մույթերի (սյուների) և կամարների ամրացման գործը, որը պահանջում է մեծ աշխատանք: Մասնագետներն առաջարկել են դրանք ամրացնել հետևյալ կերպ. քանդել բոլոր մույթերի ծեփը, ապա մույթերի շորս կողմից ամրացնել երկաթյա հորիզոնական գոտիներ՝ իրարից

մեկ մետր հեռավորությամբ՝ սկսած հատակից մինչև մույթն ընդգրկող կամարի կրունկը։ Մույթների ճեղքվածքները փակվում են ցեմենտի շաղախի ներարկման միջոցով։ Այնուհետև մույթերը պատվում են երկաթ-բետոնե շապիկով, սակայն այն հաշվով, որ մույթների շափերը շատ շխախտվեն։

Մոտավորապես նույն ձևով նախատեսվում

մասնագետները, ինչպես և պատմաբանները միահամուռ կերպով եկել են այն եզրակացության, որ բոլորովին անիմաստ են այդպիսի վերափոխումները։

Եվ իրոք, էջմիածնի Տաճարը 1650 տարվա հնություն է։ Նրա ճարտարապետական և պատմական ողջ արժեքը հենց դրանում է կայանում։ Կատարել որևէ փոփոխություն,



Թմբուկի գագաթի հյուսիս-արևելյան մասը վերանորոգումից հետո

է ամրացնել զմբեթակիր կամարները։ Այդ նպատակով կառուցվելու են լրացուցիչ երկաթ-բետոնե կամարներ։

Ինչպես տեսնում ենք, կառուցողական այս բոլոր միջոցառումները ուղղված են մի հիմնական նպատակի՝ ապահովել Մայր Տաճարի կայունությունը, կանխել նրա կանգունությանը սպառնացող որևէ վտանգ։

Նորոգման կապակցությամբ պետք է արդյոք Մայր Տաճարը ճարտարապետական կամ կոնստրուկտիվ փոփոխությունների ենթարկվի, թե՞ ոչ։ Այս հարցը ևս բաղմնավորմանի քննության է առնվել։ Սակայն բոլոր ճարտարապետները, շինարարական գործի մյուս


կնշանակի զեղծել ճարտարապետական կոթողը, մեղանշել պատմության հանդեպ, աղավաղել այդ բացառիկ, հույակերտ շենքը այնպիսի տարրերով, որոնք ոչ մի կերպ չեն կարող առնչվել նրա ճարտարապետական ամբողջության հետ։

Միանգամայն իրավացի են ճարտարապետության մասնագետները և պատմաբանները, որոնք միաբերան հայտարարում են, թե էջմիածնի Տաճարը այնպիսի կատարելագործված կոթող է, որ այն կարիք չի զգում ճարտարապետական վերափոխությունների ու վերակառուցումների։ Խնդիրն այն է, որ պահպանվի այդ պատմական հուշարձանը այն վիճակում, ինչպիսին նա եղել է անցյալում։

Ահա թե ինչու, ելնելով այս հիմնական ու կարևոր սկզբունքից, Մայր Տաճարի վերականգնման ու նորոգման աշխատանքները հիմնականում տարվում են մի ուղղությամբ՝ վերականգնել այն, ինչ եղել է, պահպանել այն, ինչ կա:

Տաճարի նորոգման աշխատանքներում խոշոր տեղ է տրված նախ և առաջ ներսի մանրանկարների վերականգնմանը, որովհետև

Մասնագետ նկարիչներից և հնագետներից կազմված մի հեղինակավոր հանձնաժողով, երկարատև ու մանրազնին ուսումնասիրություններից հետո կարողացավ եղած բեկորների հիման վրա ճշգրիտ կերպով որոշել, թե ինչպիսին է եղել ողջ Տաճարի նկարազարդման նախնական պատկերը և ըստ այնմ կազմել այդ մանրանկարների վերականգնման նախագիծը: Այդ նախագծի հիման վրա այժմ կատարվում է Տաճարի ներսի մանրանկարների վերականգնումը:



Թմբուկի հյուսիս-արևմտյան մասը վերանորոգումից առաջ

այդ զարդանկարները գեղարվեստական բացառիկ մեծ արժեք են ներկայացնում: Ինչպես հայտնի է, Մայր Տաճարի նկարազարդումը կատարվել է 18-րդ դարում, հայ ահանավոր վարպետ-նկարիչներ Նաղաշ և Հովնաթան Հովնաթանյանների կողմից: Հետագայում, կտորից ծծվող խոնավության հետևանքով, այդ զարդանկարների մեծ մասը քայքայվել ու թափվել է: Մնացել է մի շնչին մասը միայն՝ գլխավոր գմբեթի և նրան հարակից կամարների տակ:

Իր ժամանակին հայտնվել է այն կարծիքը, որ նկարների եղած բեկորների հիման վրա Հովնաթանյանների գործը ամբողջությամբ վերականգնել անհնարին է: Հետագայում ցույց տրվեց, որ այս փաստարկումները ևս զուրկ են որևէ լուրջ հիմքից:

Ներկայումս մանրանկարների վերականգնման աշխատանքների մոտ մեկ երրորդն արդեն կատարված է: Ամբողջովին նկարազարդված են արևմտյան և հարավային խորանների առաստաղները, ավարտված է կենտրոնական գմբեթի կամարի նկարների վերականգնումը, կամ ավելի ճիշտ, նրանց թարմացումը, քանի որ դրանք ժամանակի ընթացքում կորցրել էին իրենց վաղեմի գույները:

Ըստ նախագծի, նկարազարդվելու են Տաճարի ամբողջ առաստաղը ու կամարները՝ մինչև պատերի ու գմբեթակիր մուլթերի որոշ մասը՝ ամբողջ պարագծով: Պատերի և սյուների մնացած մասը՝ մինչև հատակը ներկվելու է համապատասխան գույնով: Վերա-

կանգնվելու են նաև սեղանի մարմարապատ ճակատի վրա եղած զարդանկարները:

Մանրանկարների վերականգնման աշխատանքները կատարում են Երևանի Գեղարվեստական ինստիտուտի ավարտած մի խումբ երիտասարդ նկարիչներ՝ Հայաստանի Պետական թանգարանի և Պատկերասրահի հին հայկական արվեստի բաժնի վարիչ, արվեստի վաստակավոր գործիչ Լ. Դուռնովայի անմիջական ղեկավարությամբ, ինչպես նաև ականավոր նկարիչ-մասնագետների ընդհանուր հսկողությամբ:

Թյունը ծծվել է ներս ու սլառճառ դարձել շենքի մասնակի խարխուման, առաջին հերթին մանրանկարների մեծագույն մասի ոչնչացման:

Ճարտարապետական խորհրդում կտուրի նորոգման նախագիծը քննարկելիս, որոշ անձինք հայտնեցին այն կարծիքը, որ Տաճարի պատերի ու մույթերի վրա գործադրվող ճշնշումը թեթևացնելու, հետևապես և վտանգները կանխելու նպատակով լավ կլինի, եթե կտուրի և զմբեթների ներկա ծածկը ամբողջովին փոխարինվի թիթեղով: Ծարտարապետ-



Թմբուկի հյուսիս-արևմտյան մասը վերանորոգումից հետո


Էջմիածնի Մայր Տաճարի հետագա պահպանման գործում կարևոր նշանակություն ունի կտուրի վերանորոգումը:

Ինչպես հայտնի է, Տաճարի կտուրը պատած է սրբատաշ սալաքարերով: Եթե զմբեթների կտուրները իրենց խիստ թեթևության շնորհիվ զերծ են մնացել անձրևաջրերի ազդեցությունից, ապա այդ չի կարելի ասել շենքի կտուրի մյուս հատվածների նկատմամբ, որոնք չունեն այդպիսի թեթևություն: Եվ ահա, ժամանակի ընթացքում, անձրևաջրերի ազդեցության ներքո, կտուրի հիշյալ հատվածների սալաքարերի կարերը ենթարկվել են քայքայման և նրանց միջով խոնավու-

տական խորհուրդը որոշեց կտուրի ծածկը թողնել նույնը, սակայն, ցեմենտի ու ալյուրիների հատուկ բաղադրության միջոցով ամրացնել սալաքարերի կարերը, իսկ այն մասերը, որոնք համեմատաբար հարթ են ու անձրևաջրերի ազդեցությանը ավելի ենթակա՝ պատել ցինկապատ թիթեղով:

Ներկայումս կտուրի նորոգման աշխատանքները սկսված են վերոհիշյալ նախագծին համապատասխան:

Տաճարի վերանորոգման հարցի հետ միասին առաջ եկավ նաև վանքի շրջակայքի, նրա բակի բարեկարգման հարցը:



Արևմտյան հենարան-կամարի ճակատը և հարակից մասերը վերանորոգումից առաջ



Արևմտյան հենարան-կամարի ճակատը և հարակից մասերը վերանորոգումից հետո

Նախ և առաջ որոշվեց քանդել բակի կա-
վաշեն պարիսպը, որն իրենից գրեթե ոչ մի
պատմական արժեք չէր ներկայացնում: Դրա
փոխարեն ներկայումս ՍՍՌՄ Ճարտարապե-
տական ակադեմիայի իսկական անդամ,
պրոֆեսոր Ս. Սաֆարյանի և ճարտարապե-
տության թեկնածու Ռ. Իսրայելյանի նախա-
գծով կառուցվում է նոր պարիսպ: Դա ճար-
տարապետական մի գեղեցիկ շինվածք է,
3—5 մետր բարձրությամբ: Այն ամբողջովին
կառուցվում է նույն տուֆ քարով, որով կա-
ռուցված է Տաճարը: Բակի կողմից, պարըս-
պի մեջ, իրարից որոշ հեռավորության վրա
արված են կամարակապ որմնախորշեր:

Պարսպի կառուցումը ընթանում է արագ
թափով և առաջիկա մեկ-երկու ամսում այն
ամբողջովին կավարտվի:

Գեղեցիկ կերպով ձևավորվելու է դեպի
Մայր Տաճարի բակը տանող արտաքին մուտ-
քը: Բակում տնկվելու են նոր ծառեր, պատ-
րաստվելու են ծաղկանոցներ, ասֆալտա-

պատվելու են անցուղիները, կառուցվելու են
ցայտադրյալները:

Մասնակի նորոգման են ենթարկվելու նաև
Մայր Տաճարի հարակից շենքերը: Վեհարա-
նի հողածածկ կտուրը փոխվում է նորով:
Նորոգվելու են Ծաղկյա դահլիճի մանրա-
նկարները:

Ահա մոտավոր պատկերը այն աշխա-
տանքների, որոնք սկսված են և պետք է կա-
տարվեն էջմիածնի Մայր Տաճարի վերա-
կանգնման և նորոգման ուղղությամբ:

Կառավարական մարմինները՝ հանձինս
Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին կից
Հայ Եկեղեցու գործերի խորհրդի, ինչպես և
շինարարական մարմինները ձեռք են առել
ամեն միջոց՝ մինչև առաջիկա ամսան վերջը
նորոգման բոլոր աշխատանքներն ավարտե-
լու համար: Կասկած չկա, որ ձեռնարկված
մեծ գործը կպսակվի կատարյալ հաջողու-
թյամբ:

